□.□□□□□□□□□□ □□□□□□□□□□□,□□□□□□□ □□□□□□□□□,□□□□□□□□□ □□□□□□□□□□ □ □□□□□□□ □□□□□ □□□□□□□□□□□□□□□□ □□

Ս. Ակիփսիմոս եպիսկոպոսը, Հովսեփ քահանան և Այիթալա սարկավագը նահատակվել են Դ դարում: Ս. Ակիփսիմոսն ազգությամբ պարսիկ էր: Նա Հովսեփ քահանայի և իր Այիթալա սարկավագի հետ ձերբակալվում է Շապուհ Բ արքայի՝ քրիստոնյաների դեմ կիրառած հալածանքների ժամանակ: Նրանց տանում են Արբելա քաղաքը՝ դատվելու համար արևի գերագույն քուրմ Արդախի մոտ, սակայն նրանք հրաժարվում են երկրպագել արեգակին և կրակին: Նրանց նետում են մի մութ գուբ, ուր մնում են երեք տարի: Այնուհետև սրբերին ուղարկում են Մեդիա՝ հանձնելով Շապուհ արքայի դատին, ուր և Քրիստոսի սուրբ վկաներն ընդունում են նահատակության անթառամ պսակը: Ըստ վարքագրական աղբյուրների՝ ս. Ակիփսիմոսը գլխատվում է, իսկ Հովսեփն ու Այիթալան՝ քարկոծվում:

Ս. Պղատոնը ծնվել է Անկյուրիայում՝ քրիստոնյա բարեպաշտ ընտանիքում: Դեռ մանկուց սնվել և դաստիարակվել է Ս. Ավետարանի պատվիրաններով: Վաղ տարիքից զրկվելով ծնողներից՝ նա վաճառում է իրեն բաժին ընկած ողջ ունեցվածքը, բաժանում այն աղքատներին և կարիքավորներին՝ նվիրվելով հեթանոսներին դարձի բերելու և Աստծո խոսքի տարածման համար: Քրիստոնյա լինելու պատճառով ձերբակալվում է և անասելի տանջանքների մատնվում: Դատավորը ոչ մի կերպ չի կարողանում նրան ետ պահել քրիստոնեությունից և կուռքերին զոհ մատուցելուց, ուստի հրամայում է, որ սրբին գլխատեն: Ս. Պղատոնը նահատակվել է 4-րդ դարի առաջին քառորդում:

□□□□□ □□□□□□□□□

04.11.2008
03.11.2009
02.11.2010
01.11.2011
06.11.2012
05.11.2013
04.11.2014
03.11.2015
01.11.2016
07.11.2017
05.11.2018
05.11.2019
03.11.2020

02.11.2021
01.11.2022
07.11.2023
05.11.2024
04.11.2025
03.11.2026
02.11.2027
06.11.2028
05.11.2029
05.11.2030